ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ

ՀԱԿԻՐՃ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԻՍ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ REPAT ARMENIA ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԻՐԵԼԻ՛ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ,

Բարի գալուստ տուն: Մենք՝ ի դեմս ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, ողջունում ենք հայրենադարձվելու Ձեր որոշումը և պատրաստ ենք հնարավորինս Ձեր կողքին լինել: Մեր գրասենյակը տեղեկություններ է տրամադրելու և անհատական խորհրդատվական ծառայություններ է մատուցելու Ձեզ և Ձեր ընտանիքին, հանդիսանալու է կապող օղակ բոլոր պետական հաստատությունների միջև՝ ապահովելով լիարժեք ինտեգրում հայաստանյան հասարակությանը:

Հայրենադարձության այս հակիրճ ուղեցույցը, որը մենք պատրաստել ենք Repat Armenia հիմնադրամի մեր գործընկերների հետ միասին, ծառայելու է որպես ուղեցույց Հայաստան տեղափոխվելու, ապրելու և աշխատելու համար: Այն տրամադրում է տարաբնույթ գործնական տեղեկություններ և խորհուրդներ, ուղղորդումներ այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնք հարկավոր են ՀՀ քաղաքացիություն կամ կացության իրավունք ստանալու, անձնական գույքի տեղափոխման, հասցեի գրանցման, հանրային ծառայության համարանիշի ձեռքբերման, դպրոցում գրանցվելու, բանկային հաշիվ բացելու, բնակարան վարձակալելու և բազում այլ գործընթացների համար:

Հայրենադարձության խթանումը և հայրենադարձների ինտեգրման աջակցությունը մեր առաջնահերթություններից են: Ազատ եղեք կապ հաստատել մեզ հետ, և մենք ուրախ կլինենք աջակցել Ձեզ:

Հարգանքով՝

Զարեհ Սինանյան

© *2021* Բոլոր իրավունքները պաշտպանված են
Հայաստանի Հանրապետության Սփյուռքի գործերի գլխավոր
հանձնակատարի գրասենյակի և *Repat Armenia* հիմնադրամի
կողմից

Շապիկի նկարը՝ ՀասմիկՂազարյան Օլսոնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

Repat Armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասին 1
Repat Armenia հիմնադրամի մասին 2
Հայաստան տեղափոխվելու նախապատրաստում 3
Քաղաքացիություն ստանալու դիմում 4
Կացության կարգավիճակ և ավելին 6
Անձնական գույքի տեղափոխում 7
Առողջապահություն 8
Կրթություն 9
Բանկային գործարքներ և ֆինանսներ 10
Զբաղվածություն 11
Աշխատանքի թույլտվություն 12
Վարձակալություն 13
Կոմունալ ծառայություններ, բջջային կապ և ինտերնետ 14
Հասարակական տրանսպորտ 15
Վարորդական իրավունք 16
Կեցության ծախսեր 17
Պետական հարկեր ու վճարներ 18
Կարևոր և արտակարգ իրավիճակների հեռախոսահամարներ 19

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Մեր մասին

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը հիմնվել է 2019 թվականի հունիսի 11-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից գրասենյակի կանոնադրության հաստատմամբ: Գրասենյակը Հայաստան-սփյուռք հարաբերությունների ամրապնդման, խորացման, սփյուռքահայերին աջակցության տրամադրման և հայրենադարձության գործընթացի իրականացման, ինտեգրման ապահովման, համահայկական ներուժի քարտեզագրման, սփյուռքը հայաստանյան կյանքին ներգրավելու ծրագրերի ռազմավարության և քաղաքականության մշակման պատասխանատու մարմինն է:

Զարեհ Սինանյանը՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը, և Սառա Անջարգոլյանը՝ գրասենյակի ղեկավարը, հայրենադարձներ են: Կառույցը բաղկացած է տարբեր ստորաբաժանումներից, որոնցում ներգրավված են ներկայացուցիչներ սփյուռքի հայ համայնքներից:

Մեր հայեցակարգը

Մեր աշխատանքը նվիրված է և՛ հայաստանաբնակների, և՛ համաշխարհային հայկական սփյուռքում բնակվողների ապագայի և հեռանկարների բարգավաճմանը, հայկական ինքնության պահպանմանը և հայ ժողովրդի երկու անբաժանելի մասերի առավելագույն ինտեգրմանը: Հայաստանի և սփյուռքի հզորությունն ու կենսունակությունը փոխկապակցված են, և մեր նպատակներն ու քաղաքականությունը նպատակաուղղված են ընդհանուր հետաքրքրությունների առաջմղմանը:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը գործում է որպես կարևորագույն կամուրջ՝ համախմբելով համահայկական ներուժը և սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներին լիովին ներգրավելով հայրենիքի կյանքին: Սփյուռքի ակտիվ մասնակցությամբ և նվիրվածությամբ մենք կարող ենք ստեղծել այն հայրենիքը, որի մասին բոլորս ենք երազում՝ այս ճանապարհով ամրապնդելով և հզորացնելով նաև սփյուռքը:

Վազգեն Սարգսյան 3
Երևան, Հայաստան 0010
(+374) 10 589155
diaspora@gov.am
diaspora.gov.am
facebook.com/DiasporaGovAm

REPAT ARMENIA

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Repat Armenia հիմնադրամը ոչ պետական, շահույթ չհետապնդող կառույց է, որը հիմնադրվել է 2012 թվականի օգոստոսին՝ հայրենադարձությունը խթանելու, հայրենադարձներին իրազեկելու, ինչպես նաև նախաձեռնելու համար բարձր ազդեցություն ունեցող (մասնագիտական, ձեռնարկատիրական) անհատների և ընտանիքների վերադարձը: Երևանյան գրասենյակում տեղակայված մեր անձնակազմը ամբողջությամբ պատրաստ է աջակցել Ձեզ հետևյալ ուղղություններով.

- Խորհրդատվություններ, կարիքների գնահատում և հուզող ընդհանրական հարցեր ժամանելուց առաջ կամ հետո
- Սահուն ինտեգրում հայրենադարձ համայնքին անդամակցելու միջոցով
- Ուղղորդում հիմնական ընթացակարգերին և հաստատություններին առնչվելիս
- Զբաղվածության վերաբերյալ խորհուրդներ, աշխատանքի որոնման ռեսուրսներ, HR հավաքագրման գործակալությունների և փորձառու հայրենադարձների հետ կապերի հաստատում
- Բիզնես ոլորտում ուղղորդում, կապերի հաստատում մասնագիտական ֆինանսական և իրավական ընկերությունների հետ, բիզնես համագործակցություն և խթանում
- Բանկային և առողջության ապահովագրության հատուկ փաթեթ

Repat Armenia-ում մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում իրազեկման բարձրացմանը և հայրենադարձության կարևորությանը՝ սփյուռքի համայնքներում կազմակերպելով ImagineArmenia ֆորումներ, հայրենադարձության և ինտեգրման վերաբերյալ մշտական առցանց զրույցներ և պանելային քննարկումներ: Մենք նաև նպաստում ենք հայրենադարձության միջավայրի զարգացմանը և ազդում ենք պետական քաղաքականության վրա:

Մեր համայնքի մի մասը դառնալուց հետո Դուք ևս կկարողանաք ներգրավվել գործընթացում՝ կիսելով Հայաստանում Ձեր անձնական և մասնագիտական փորձը և մասնակցելով Repat Armenia-ի կողմից կազմակերպված աշխատանքային խմբերի հարցումներին:

Հանրապետության 37
Երևան, Հայաստան 0010
(+374) 91 464660
integration@repatarmenia.org
www.repatarmenia.org
facebook.com/RepatArmenia

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Առաջնահերթություններ մինչ հայրենադարձվելը

- Ծրագրեք փորձնական ուղևորություն
- Նախապատրաստեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը
- Դիմեք քաղաքացիության, մշտական կամ ժամանակավոր կացության համար
- Ծանոթացեք անձնական իրերը և ֆինանսական ակտիվները տեղափոխելու կանոններին և ընթացակարգերին
- Սովորեք կամ բարելավեք հայոց լեզուն

Ցանկացած տեղափոխության ամենակարևոր կողմը, թերևս, Ձեր բոլոր փաստաթղթերի բնօրինակների և դրանց նոտարական կարգով վավերացված տարբերակների և ապոստիլացված թարգմանությունների պարտադիր հավաքագրումն է: Ստորև ներկայացված է Հայաստանում իրավական կարգավիճակ ստանալու, դպրոցում գրանցվելու և այլ նպատակներով անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը.

- Ընտանիքի բոլոր անդամների ծննդյան վկայականներ ը
- Անձնագրեր
- Մկրտության վկայական
- Ամուսնության վկայական
- Կրթության վկայականներ
- Պատվաստումների և բժշկական այլ փաստաթղթեր
- Վարորդական իրավունք
- Անշարժ և շարժական գույքի սեփականությունը հավաստող փաստաթղթեր

ՀԱՎԵԼՈՒՄ. Այս փաստաթղթերը պետք է լինեն թարգմանված, նոտարական կարգով վավերացված կա՛մ այն երկրում, որտեղից ժամանում եք, կա՛մ Հայաստանում: Որոշ փաստաթղթեր, ինչպիսիք են ծննդյան, ամուսնության և մկրտության վկայականները, պետք է վավերացված լինեն ապոստիլով այն երկրում, որտեղից ժամանում եք: Հայկական դեսպանությունների և հյուպատոսությունների մեծամասնությունը տրամադրում են նոտարական և թարգմանչական ծառայություններ:

[Ապոստիլը հաստատում է փաստաթուղթը ստորագրած անձի ստորագրության իսկությունը, ինչպես նաև փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմանիշի իսկությունը:]

Կապ հաստատեք Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և Repat Armenia-ի հետ հայրենադաձության վերաբերյալ խորհուրդների և Ձեր հայրենադարձության ընթացքը կազմակերպելու համար:

Միացեք **Armenian Repatriater Network** (+10,000 մասնակից) խմբին սահուն ինտեգրման և հայրենադարձության վերաբերյալ գործնական խորհուրդների համար:

ԴԻՄՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Իրավական կարգավիճակները Հայաստանում
Դուք կարող եք դիմել ՀՀ քաղաքացիության, ժամանակավոր կամ մշտական կացության համար ինչպես այն երկրում, որտեղից ժամանում եք, այնպես էլ Հայաստանում: Կարգավիճակը, որը Դուք կընտրեք, կորոշի Ձեր արտոնությունների և պարտականությունների տեսակը, օրինակ՝ ընտրական իրավունքը կամ բանակում ծառայությունը:

ՀՀ քաղաքացիության ձեռքբերում
Գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու չորս եղանակ՝ ըստ ազգության, ըստ ամուսնության, ըստ բնակության վայրի և ըստ բացառության: Մենք խորհուրդ ենք տալիս քաղաքացիություն կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմել նախքան Հայաստան տեղափոխվելը, քանի որ այս գործընթացը կարող է տևել մինչև 6 ամիս և ավելի, եթե անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված չեն:

ՀԱՎԵԼՈՒՄ. Քաղաքացիության ստացումից հետո Ձեր հայկական անձնագիրը պետք է վերցնեք ոչ թե հայկական դեսպանությունից կամ հյուպատոսություններից (բացառությամբ Սիրիայում, Լիբանանում և Իրաքում դիմողների), այլ Հայաստանից:

Քայլ 1. Նախապատրաստիր փաստաթղթերը
- անձնագիր և դրա պատճենը
- վեց (գունավոր) լուսանկար 35 x 45 մմ չափսով
- ծննդյան վկայականը և դրա պատճենը
- ամուսնության վկայականը և դրա պատճենը
- ամուսնու անձնագիրը և պատճենը կամ քաղաքացիությունը հաստատող վկայականը
- երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը
- ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթուղթ

Խնդրում ենք հաշվի առնել, որ հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ծննդյան և ամուսնության վկայականները վավերացնել նոտարով և ապոստիլի վկայագրով: Ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթուղթը, օրինակ՝ մկրտության փաստաթղթեր, ծնողների ծննդյան վկայականներ կամ այլ փաստաթղթեր, որոնք կարող են կապ ունենալ Ձեր գործին, հնարավոր է անհրաժեշտություն առաջանա վավերացնել այն երկրի դեսպանության կամ հյուպատոսության գրասենյակում, որտեղ տվյալ փաստաթուղթը թողարկվել է:

Քայլ 2. Դիմել քաղաքացիություն ստանալու համար
Քաղաքացիություն ստանալու դիմումը հիմնականում լրացվում է ՀՀ ոստիկանության անձնագրային կամ վիզաների վարչությունում (սովորաբար հայտնի է որպես ՕՎԻՐ): Դուք կարող եք նաև դիմումը լրացնել արտերկրում հայկական դեսպանության կամ հյուպատոսության գրասենյակներում:

Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10
Երևան, Հայաստան 0010
(+374) 10 370264
Երկուշաբթի-հինգշաբթի՝ 9:00-18:00, Ուրբաթ՝ 10:00-18:00

Քայլ 3. Հետևեք Ձեր դիմումի կարգավիճակին

Քաղաքացիություն ստանալու դիմումը սովորաբար ընթանում է 3-6 ամիս: Նախքան երկրի նախագահը կստորագրի քաղաքացիության մասին հրամանագիրը, այն ուսումնասիրվում է ՀՀ ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Արտաքին գործերի նախարարության, Քաղաքացիության կոմիտեի և վարչապետի աշխատակազմի կողմից: Ձեր դիմումը լրացնելուն պես՝ Դուք կստանաք վեցնիշ կոդ, որի միջոցով կարող եք առցանց հետևել Ձեր դիմումի ընթացքին **www.police.am** կայքի միջոցով:

Քայլ 4. Անցեք երդման արարողությունը և ստացեք անձնագիր

Քաղաքացիություն ստանալուց հետո հարկավոր է ֆիզիկապես գտնվել Հայաստանում անձնագիր ստանալու համար (բացառությամբ Սիրիայից, Լիբանանից և Իրաքից դիմողների): Ձեզ տրվելու է օր և ժամ ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն (ՕՎԻՐ) երդման արարողությանը մասնակցելու և անձնագիրը ստանալու համար:

Հավելում. Քաղաքացիության համար դիմելիս կարող եք ընտրել սովորական կամ բիոմետրիկ անձնագիր և ազգային նույնականացման քարտ (խնդրում ենք հաշվի առնել, որ պետություններից շատերը ճանաչում են միայն բիոմետրիկ անձնագրեր, ուստի առաջարկում ենք դիմել բիոմետրիկ անձնագիր ստանալու համար): Անձնագիր ստանալը կարող է տևել մինչև երեք շաբաթ: Այս փուլում Դուք կարող եք նաև գրանցել Ձեր հասցեն: Եթե ցանկանում եք գրանցել տեղական հայկական հասցե, ապա պարտավոր եք ներկայացնել Հայաստանում բնակվելու ապացույց (օրինակ՝ սեփականության վկայական, վարձակալության պայմանագիր, սեփականատիրոջ համաձայնություն և այլն: Տե՛ս «Հասցեի գրանցում» բաժինը):

Քայլ 5. Գրանցվեք զինկոմիսարիատում

Եթե դուք 50 տարեկանից ցածր տարիքային խմբում գտնվող տղամարդ եք, ապա պարտավոր եք գրանցվել տեղի զինվորական կոմիսարիատում: Եթե Դուք զինվորական ծառայություն եք իրականացրել այլ երկրում առնվազն 12 ամիս կամ իրականացրել եք այլընտրանքային ծառայություն առնվազն 18 ամիս, ապա կարող եք ներկայացնել դա հաստատող վավերացված փաստաթուղթ (հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով): Գրանցումը սովորաբար տևում է 1-3 օր:

Երևանում զինվորական կոմիսարիատների հասցեներ և հեռախոսահամարներ

Հալաբյան 19ա	010 399 673
Ազատության 2ա	010 200 084
Նելսոն Ստեփանյան 3	010 635 560
Չեխովի 26	010 460 661

Քաղաքացիություն ստանալու համար յուրաքանչյուր փուլում պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի տեսակի և զինծառայության պահանջների վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք **diaspora.gov.am** կայքի **«Հայրենադարձություն»** բաժին:

ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ՀԱՍՑԵԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇ

Կացության կարգավիճակի տեսակները

Եթե Դուք չեք դիմում քաղաքացիություն ստանալու համար, ապա կարող եք դիմել կացության կարգավիճակի համար: Վերջինս լինում է 3 տեսակի.

- Ժամանակավոր կացության կարգավիճակ, տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ ամեն անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ
- Մշտական կացության կարգավիճակ, տրվում է մինչև 5 տարի ժամկետով, ամեն անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ
- Հատուկ կացության կարգավիճակ, տրվում է անձնագրի տեսքով և վավեր է մինչև 10 տարի ժամկետով ամեն անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ

http:// Այցելեք **diaspora.gov.am** կայքի «**Քաղաքացիություն և կացության կարգավիճակ**» բաժին՝ կացության յուրաքանչյուր կարգավիճակի համար իրավական պահանջների, անհրաժեշտ փաստաթղթերի և դիմելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար:

Հասցեի գրանցում

ՀՀ քաղաքացիներն ու կացության կարգավիճակ ունեցող անձինք պետք է գրանցեն իրենց հասցեն ոստիկանության տարածքային բաժնում: Գրանցման ժամանակ հարկավոր է ներկայացնել Հայաստանում բնակվելը հաստատող վկայություն: Դա կարող է լինել սեփականության վկայական կամ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր կամ սեփականատիրոջ համաձայնություն: Եթե այդ փաստաթղթերից ոչ մեկը հասանելի չէ, ապա կարող եք դիմել ոստիկանության տարածքային բաժին՝ փաստացի ստուգում կատարելու խնդրանքով, որպեսզի հաստատվի նշված հասցեում բնակվելու փաստը (սովորաբար դա տևում է մինչև երկու շաբաթ):

Եթե ՕՎԻՐ-ում անձնագիր ստանալու համար Դուք չեք գրանցել հասցեն, ապա կարող եք գրանցել Ձեր հասցեն ոստիկանության տարածքային բաժնում:

Հանրային ծառայության համարանիշ

Հանրային ծառայության համարանիշը երաշխավորում է Հայաստանում բնակվող քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքների իրականացումը: Այն ունի եզակի հերթական համար և անհրաժեշտ է զբաղվածության, ինչպես նաև աղքատության և գործազրկության նպաստներ, ծերության և հաշմանդամության կենսաթոշակներ ստանալու, ինչպես նաև բանկային հաշիվ բացելու, հարկեր վճարելու և այլնի համար:

Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր անձնագիրը կամ կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, որպեսզի կարողանաք դիմել Հանրային ծառայության համարանիշ ստանալու համար: Պետք է դիմել ՕՎԻՐ:

ՀԱՎԵԼՈՒՄ. Նույնականացման քարտ (ID քարտ) ձեռք բերելու դեպքում այն կներառի Ձեր հանրային ծառայության համարանիշը, ուստի կարիք չկա լրացուցիչ հանրային ծառայության համարանիշ ձեռք բերել: Նույնականացման քարտ կարող են ստանալ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ

ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Անձնական գույքի տեղափոխում

Մշտական բնակություն հաստատելու համար Հայաստան տեղափոխվելիս Դուք կարող եք Ձեր անձնական գույքը տեղափոխել առանց տուրքերի և մաքսային վճարների ՀՀ քաղաքացիություն, հատուկ կամ մշտական կացության կարգավիճակ ստանալուց հետո, եթե մինչ մաքսային մարմին դիմելը Հայաստանի Հանրապետությունից բացակայել եք 1825 օր (5 տարի) ժամկետից առնվազն 915 օրը և նախկինում չեք օգտվել այդ արտոնությունից:

Ձեր անձնական իրերը ներկրելիս մաքսային արտոնություններ ստանալու համար իրերը պետք է լինեն առանց գործարանային փաթեթավորման և մակնշման: Դուք կարող եք առանց մաքսային պարտավորությունների ներկրել անձնական օգտագործման գույքի հետևյալ տեսակները.

- Էլեկտրական տեխնիկայի յուրաքանչյուր տեսակից առավելագույնը երեք օրինակ
- Կահույքի յուրաքանչյուր տեսակից մեկ հավաքածու միայն անձնական օգտագործման նպատակով,
- Անձնական օգտագործման մեկ ավտոտրանսպորտային միջոց, որը ձեռք է բերվել տեղափոխությունից առաջ և ՀՀ ներմուծելիս նախկին բնակության երկրում առնվազն վեց ամիս առաջ հաշվառված (գրանցված) է եղել տվյալ անձի անունով, ու առկա է դա հաստատող փաստաթուղթ,
- Այլ անձնական օգտագործման ապրանքները (հագուստ, տնային և անկողնային պարագաներ, գրքեր և այլն) կարող են ներմուծվել առանց սահմանաչափի:

ՀԱՎԵԼՈՒՄ. Աշխատանքի կամ բիզնես գործունեության հետ կապված իրերը չեն կարող ներմուծվել առանց մաքսային տուրքերի և վճարների:

Ձեր անձնական իրերը հնարավոր է ներկրել առանց մաքսային պարտավորությունների Ձեր ժամանումից հետո 18 ամիսների ընթացքում: Դուք պետք է մաքսատուն ներկայացնեք ներմուծման հարկազատման դիմում՝ նշելով ներմուծվող ապրանքների անվանումը, քաշը և քանակը, Հայաստանի Հանրապետությունում Ձեր մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթուղթը, նախքան Ձեր տեղափոխվելը օտարերկրյա պետությունում մշտական բնակությունը հաստատող փաստաթուղթը, գույքի փոխադրման վճարման բնօրինակ անդորրագրերը: Մաքսատունը 3-շաբաթյա ժամկետում կբավարարի կամ կմերժի Ձեր դիմումը:

http:// Մանրամասների համար այցելեք **diaspora.gov.am** կայքի **«Անձնական գույքի տեղափոխում»** բաժին:

Պետական եկամուտների կոմիտե
3, 7 Մովսես Խորենացի փողոց
Երևան 0015
(+374) 60 544 444
secretariat@customs.am
Երկուշաբթի-ուրբաթ՝ 09:00-18:00

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հանրային առողջապահություն
Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և ծառայություններ տրամադրողները պարտավոր են առաջին անհրաժեշտության բուժօգնություն ցուցաբերել յուրաքանչյուր անհատի (ներառյալ օտարերկրացիների)՝ անկախ նրանց վճարունակությունից: Հայաստանի Հնարապետությունում ծննդօգնությունը և մինչև 18 տարեկան քաղաքացիներին մատուցվող բժշկական ծառայությունները տրամադրվում են անվճար (ընթացակարգերի տեսակների որոշակի սահմանափակումներով): Առկա են բազմաթիվ ծրագրեր, որոնք աջակցում են կարիքավոր անձնանց անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար:

Առողջության առաջնային կարիքների համար մարդկանց մեծամասնությունը նախընտրում է գրանցվել տարածքային պոլիկլինիկաներում կամ մասնավոր հիվանդանոցներում: Հանրային պոլիկլինիկաների ծառայությունների գերակշիռ մասն անվճար է:

Գրանցվելու համար պետք է.
1. Գտնել ֆիզիկապես Ձեզ ամենամոտ տարածքային պոլիկլինիկան
2. Այցելել այնտեղ անձնագրով և սոցիալական քարտով
3. Պայմանագիր կնքել պոլիկլինիկայի հետ՝ դառնալով նրա շահառուն

Հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք Առողջապահության նախարարության հետ:

Առողջապահության նախարարություն
3-րդ կառավարական շենք
Երևան, Հայաստան 0010
(+374) 60 808003
info@moh.am
www.moh.am

Բժշկական ապահովագրություն
Հայաստանում անհատական հիմունքներով բժշկական ապահովագրություն ունենալն ընդունված չէ, ուստի Ձեզ համար ավելի մատչելի և շահավետ կլինի ներառվել կորպորատիվ փաթեթում:

Մատչելի առաջարկներ ապահովելու համար Repat Armenia հիմնադրամը համագործակցում է Նաիրի Ինշուրանսի հետ: Առաջարկի արժեքը տարեկան կազմում է 120,000 ՀՀ դրամ (մոտ 250 ԱՄՆ դոլար), 3 և ավելի անդամներից բաղկացած ընտանիքի համար կարժենա ավելի քիչ, և ընդգրկում է մինչև 7 մլն ՀՀ դրամ (մոտ 14,500 ԱՄՆ դոլար) արժողությամբ բժշկական ծառայություններ Հայաստանում և Արցախում:

Repat Armenia-ի փաթեթում ներառված ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք **repatarmenia.org**:

ՀԱՎԵԼՈՒՄ. Այստեղ ներկայացված գները ենթակա են փոփոխման:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիների, կացության կարգավիճակ ունեցողների համար պետական մանկապարտեզները և ընդհանուր միջնակարգ կրթությունն անվճար են: Դասավանդումն անցկացվում է արևելահայերենով: Բոլոր պետական դպրոցներում դասավանդվում են անգլերեն և ռուսերեն, որոշները նաև առաջարկում են գերմաներեն, ֆրանսերեն և չինարեն: Պետական քոլեջներն ու համալսարանները նույնպես առաջարկում են զեղչված կամ անվճար տեղեր այն ուսանողների համար, ովքեր բարձր գնահատականներ են ստանում ընդունելության քննությունների ժամանակ:

Կան նաև բազմաթիվ մասնավոր մանկապարտեզներ, դպրոցներ և համալսարաններ, որոնք հաճախ ունեն մասնագիտացման այնպիսի ոլորտներ, ինչպիսին են լեզուները, միջազգային կամ կրոնական կազմակերպությունների հետ կապը: Մասնավոր հաստատություններում ուսման վարձի չափը տարբեր է:

Գրանցվել հանրային դպրոցում

Ձեր երեխային հանրակրթական դպրոցում գրանցելու գործընթացը բավականին դյուրին է, պարզապես պետք է այցելել համապատասխան դպրոց՝ ունենալով հետևյալ փաստաթղթերը.

1. Երեխայի ծննդյան վկայականը կամ անձնագիրը (պատճեններով)
2. Տեղեկանք երեխայի հաշվառման մասին, այսինքն՝ թե որ տարածքում է նա հաշվառված
3. Եթե երեխան պետք է ընդունվի առաջին դասարանից բարձր, ապա վերցրեք նաև նրա անձնական գործը, պարզ ասած՝ այն բոլոր փաստթղթերը, որոնք առկա են եղել նախորդ դպրոցում
4. Ակադեմիական առաջընթացի տեղեկանք, որը ներկայացնում է երեխայի գնահատականների ցուցակն ըստ առարկաների: Եթե ուսումնական տարին դեռ չի ավարտվել, ընթացիկ բացակայությունների ցուցակը ևս չպետք է մոռանալ
5. 10-ից 12-րդ դասարան ընդունվողներին անհրաժեշտ է հիմնական կրթության վկայականի բնօրինակը
6. Ձեր երեխայի 2 գունավոր լուսանկար (3x4 չափի)
7. Տեղեկանք երեխայի առողջական վիճակի մասին (այս փաստաթուղթը պարտադիր չէ, սակայն կարող է պահանջվել ուսումնական հաստատության կողմից)

ՀԱՎԵԼՈՒՄ. Այն փաստաթղթերը, որոնք օտար լեզուներով են, պետք է թարգմանվեն հայերեն և վավերացվեն նոտարով:

Կրթությանը վերաբերող հավելյալ հարցերի համար դիմեք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2-րդ կառավարական շենք
Վազգեն Սարգսյան 3
Երևան, Հայաստան 0010
(+374) 10 599600
info@escs.am

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Բանկային անձնական հաշիվները հիմնականում օգտագործվում են աշխատավարձի, պետական նպաստի ու կենսաթոշակի ստացման, կոմունալ վճարումները կատարելու նպատակով: Մոբայլ և ինտերնետային բանկինգը տարածված է կոմունալ վճարումների, մասնավորապես՝ հեռախոսային և համացանցային ծառայությունների համար:

Եթե ցանկանում եք բացել բանկային անձնական հաշիվ, Ձեզ անհրաժեշտ է ունենալ.

- Անձնագիր
- Սոցիալական քարտ
- Գրանցման հասցե

ՀԱՎԵԼՈՒՄ. Օտարերկրյա քաղաքացիները կարող են անձնական բանկային հաշիվ բացել առանց վերը նշված փաստաթղթերի՝ իրենց անձնագրերի նոտարական թարգմանությամբ:

Բանկերի և երկրի ֆինանսական համակարգի վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք Կենտրոնական բանկի կայք՝ **www.cba.am:**

Բոլոր բանկերն ունեն մասնաճյուղներ, որտեղ Ձեր առօրյա գործարքների համար կարող եք հերթագրվել, վերցնել համարը, և երբ այն հայտնվի էկրանին, մոտենալ նշվող պատուհանին:

ՀԱՎԵԼՈՒՄ. Ի տարբերություն ծայրամասերում կամ փոքր փողոցներում գտնվող բանկերի՝ կենտրոնում գործող բանկերը մշտապես ծանրաբեռնված են: Ընդմիջման և փակվելու ժամերին բանկերում հերթը շատ երկար է տևում:

REPAT ARMENIA TIP. Առաջարկում ենք օգտագործել **Earlyone** հավելվածը, որով կարող եք հերթագրվել բանկ այցելելուց առաջ:

Repat Armenia-ն համագործակցում է «Ամերիա» բանկի հետ, որն ունի հատուկ առաջարկներ հայրենադարձների համար:

http:// Մանրամասների համար այցելեք **www.repatarmenia.org**

Ֆինանասական ակտիվների տեղափոխումը

Օդային կամ ցամաքային ճանապարհով Հայաստան ժամանելիս Դուք կարող եք բերել մինչև 10,000 ԱՄՆ դոլար: Եթե դուք 10,000 ԱՄՆ դոլար և ավելի կանխիկ գումար (կամ համարժեք այլ արժույթով) ԵԱՏՄ չհանդիսացող երկրից տեղափոխում եք Հայաստան, ապա պարտավոր եք այն հայտարարագրել: Կանխիկը ներառում է նաև ճանապարհորդների անդորրագրերը:

REPAT ARMENIA TIP. 10,000 ԱՄՆ դոլարից ավել գումարը (կամ համարժեք այլ արժույթով) խորհուրդ է տրվում միջազգային SWIFT փոխանցման միջոցով բանկային հաշվին փոխանցել կամ կատարել արագ բանկային փոխանցումներ MoneyGram և Unistream համակարգերի միջոցով:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում աշխատանքային զբաղվածության հնարավորություններ սկսեք փնտրել նախօրոք: Մի մոռացեք Ձեր դիպլոմներն ու վկայականները, քանի որ որոշ գործատուներ կարող են պահանջել դրանց թարգմանված օրինակները: Որոշ միջազգային կառույցներ կպահանջեն բնօրինակները:

Թարմացրեք Ձեր CV-ը և ինքնակենսագրականը: Հայկական ընկերություններից շատերը նախընտրում են ամերիկյան ոճը, երբ մեյլին կցված է մեկ էջ: Ուսումնասիրեք այն կազմակերպությունը, որին դիմում եք և հավաստիացեք, որ համապատասխանում եք առաջադրված պահանջներին: Repat Armenia-ն առաջարկում է մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև CV-ի լրացման օգնություն:

Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է 68,000 ՀՀ դրամ, որը մոտավոր համարժեք է 150 ԱՄՆ դոլարի: Աշխատավարձերի չափը տատանվում է 100,000-300,000 ՀՀ դրամի սահմաններում: 2020 թվականի ամառվա դրությամբ երկրի աշխատավարձերի միջին ցուցանիշը կազմում է շուրջ 188,000 ՀՀ դրամ կամ մոտ 400 ԱՄՆ դոլար:

Repat Armenia-ն կարող է ուղղորդել Ձեզ աշխատանքի որոնման գործընթացում և ապահովել զբաղվածության հնարավորություններով:

REPAT ARMENIA TIP. Ընդլայնեք ձեր ծանոթությունների շրջանակը: Ինչքան շատ մարդկանց հետ Դուք ծանոթանաք, այդքան ավելի հեշտ կընթանա Ձեր ինտեգրման գործընթացը: Թարմացրեք Ձեր LinkedIn-ը, միացեք Facebook խմբերի, մասնակցեք հայրենադարձների միջոցառումներին:

Եկամտահարկ

- Անհատական եկամտահարկը բոլորի համար կազմում է 22%
- Սոցիալական ապահովագրության հարկը կազմում է 5% մինչև 500,000 ՀՀ դրամ աշխատավարձի դեպքում, այն գերազանցելու դեպքում կազմում է 10%
- Ձինծառայողների հիմնադրամի պարտադիր վճարը սկսում է ամսական 1,000 ՀՀ դրամից և կախված է տվյալ անձի աշխատավարձի չափից:

HR.AM CLUB
Jobs for Repats and Expats
Գործ Կա

Staff.am
Careercenter.am
JobFinder.am

Հավելյալ տեղեկությունների և առցանց ռեսուրսների ամբողջական ցանկի համար այցելեք Repat Armenia-ի կայքէջի «**Աշխատանքի կայքեր Հայաստանում**» բաժին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք ցանկանում եք Հայաստանում աշխատել նախքան քաղաքացիություն կամ կացության կարգավիճակ ձեռք բերելը, անհրաժեշտ կլինի ստանալ աշխատանքի թույլտվություն: Ձեր գործատուն պետք է Ձեր անունից դիմի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

Բարձր հմտություններ ունեցող օտարերկրյա մասնագետները, ձեռնարկատերերը, ղեկավարները, տարբեր ոլորտների դասընթացների կամ սարքավորումների օգտագործման համար պահանջված մասնագետները, կառավարության կողմից առանձնացված ոլորտների (օրինակ՝ գյուղատնտեսություն, բնական գիտություններ, IT, ֆինանսներ, մթերման տեխնոլոգիաներ կամ մենեջմենթ) բարձր որակավորում ունեցող մասնագետները, համալսարանի դասախոսները, հավատարմագրված արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցիչները, փախստականները կամ փոխանակման ծրագրով սովորող ուսանողները ազատված են աշխատանքի թույլտվության պայմաններից:

Երբ դիմում եք աշխատանքային թույլտվություն ստանալու համար, նախարարությունը նախ պետք է համոզվի՝ արդյո՞ք թափուր պաշտոնը զբաղեցնելու համար համապատասխան որակավորում ունեցող տեղացի աշխատողներ չկան: Եթե տեղացիներ կան, ապա Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործատուին հարցազրույցի համար առաջարկելու է նրանց: Գործատուն պարտավոր չէ գովազդել առաջարկվող պաշտոնը կամ առաջարկել հատուկ աշխատավարձ: Եթե թեկնածուներ չեն առաջարկվում, կամ գործատուն հիմնավոր պատճառներ ունի թեկնածուին մերժելու համար, նախարարությունը Ձեզ կտրամադրի աշխատանքի թույլտվություն:

Աշխատանքի թույլտվությունը տրամադրելուց հետո (սովորաբար 14 օրվա ընթացքում), Դուք պետք է դիմեք Երևանի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (ՕՎԻՐ) ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար: Դիմումը պետք է հավելել անհրաժեշտ փաստաթղթերով՝ ներառյալ բուժզննման արդյունքները: Ժամանակավոր կացության քարտը տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից մոտ 30-45 օրվա ընթացքում:

Գործատուն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում
- Անձնագիր
- Դիպլոմներ և կրթությունը կամ որակավորումը վկայող փաստաթղթեր՝ հյուպատոսական վավերացմամբ (կամ ապոստիլով)
- Երկու լուսանկար (3x4 սմ)
- Պետական տուրքի վճարման ապացույց (25,000 ՀՀ դրամ պետք է վճարվի Ձեր կամ գործատուի կողմից)

Պետական զբաղվածության կենտրոն
Կ. Ուլնեցի 68
Երևան, Հայաստան 0069
(+374) 10 280625
info@employment.am
www.employment.am

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

Բնակարանի վարձակալություն
Հայաստանում վարձակալության գները կախված են գտնվելու վայրից, չափսից, շինության տեսակից, տրամադրվող հարմարություններից և ժամանակահատվածից (ամռան ամիսներին՝ զբոսաշրջության սեզոնի ընթացքում, վարձակալության գները բարձրանում են): Վարձատրվող բնակարանները հիմնականում ամբողջությամբ կահավորված են:

Երևանում և հատկապես քաղաքի կենտրոնում գները աննախադեպ բարձր են, այստեղ ստուդիո բնակարանների գինը կարող է սկսվել 300 ԱՄՆ դոլարից: Որպես կանոն՝ որքան հեռու եք կենտրոնից, այնքան ծախսը քիչ է: Ստուգեք Արաբկիր, Նոր Նորք, Շենգավիթ և Դավթաշեն թաղամասներն առավել հարմարավետ տարբերակների համար:

Ինչի՞ց սկսել
Դուք կարող եք սկսել Ձեր որոնումը Facebook-ից՝ միանալով **Armenian Repatriates Network**, **Find Flatmates/Roommates in Yerevan!** խմբերին: Հարցրեք, թե ինչ եք փնտրում՝ նշելով գինը, չափը և գտնվելու վայրը, և ինչ-որ մեկն անկասկած կպատասխանի:

Կան նաև բազմաթիվ կայքեր անշարժ գույքի գովազդներով, որոնք կարող եք զտել ըստ գտնվելու վայրի, գնի և չափսի: Ամբողջական ցանկը կարող եք գտնել Repat Armenia կայքի «**Անշարժ գույք**» բաժնում:

www.list.am **www.myrealty.am** **www.estate.am**
www.real-estate.am **www.realtors.am**

ՀԱՎԵԼՈՒՄ. Այս կայքերում նույն հայտարարությունը Դուք կարող եք տեսնեք մի քանի անգամ, քանի որ գործակալները վերահրապարակում են ուրիշների հայտարարությունները: Գործակալները հիմնականում ստանում են միջնորդավճար (սովորաբար առաջին ամսավճարի 10%-ի չափով) և՛ վարձատուի, և՛ վարձակալի կողմից: Պատրաստ եղեք վճարել վարձակալության առաջին և վերջին ամիսների համար, ինչպես նաև միջնորդավճար 10%-ի չափով: Եթե ցանկանում եք շրջանցել գործակալի միջնորդավճարը, փնտրեք առանց միջնորդի հրապարակված տարբերակներ:

REPAT ARMENIA TIP. Մի վախեցեք բանակցելուց, քանի որ վարձատուները հաճախ պատրաստ են ավելի ցածր գներով բնակարաններ տրամադրել, հատկապես երկարաժամկետ վարձակալության պարագայում:

ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ

Կոմունալ վճարումներ

Կոմունալ վճարումները (գազ, հոսանք, ջուր) հնարավոր է առցանց իրականացնել յուրաքանչյուր ամսվա 8-ից հետո: Վճարումները պետք է կատարել մինչ ամսվա 20-րդ օրը: Վճարումները սովորաբար տարբեր բջջային հավելվածների միջոցով կատարվում են առցանց, որոնց կարող եք կապել Ձեր բանկային հաշիվները: Կանխիկ վճարումներ կարող եք կատարել վճարային տերմինալների միջոցով, որոնք հաճախ տեղակայված են սուպերմարկետների մոտակայքում: Վճարումը սովորաբար կատարվում է հաճախորդի համարանիշի կամ հեռախոսահամարի միջոցով, որով ակտիվացված է ծառայությունը:

Բջջային վճարումների որոշ հավելվածներ.

- idram
- Mobidram
- TellCellWallet
- EasyWallet
- ArCa

ՀԱՎԵԼՈՒՄ. Ջեռուցման համակարգերը շատ տեղերում ապակենտրոնացված են, ինչը տարբերությունների է հանգեցնելու հոսանքի և գազի ծախսերի մեջ: Բնակության շենքի տեսակը ևս ազդեցություն ունի կոմունալ վճարումների չափի վրա (մասնավորապես՝ ջեռուցումն ու օդափոխությունը):

Բջջային կապի և ինտերնետի մատակարարի ընտրություն

Հայաստանում գործում է բջջային կապի 3 մատակարար՝ **UCom**, **VivaCell** **և** **Beeline**: Երեքն էլ ունեն հիմնականում լավ ծածկողականություն Երևանում և Հայաստանի ողջ տարածքում:

Դուք կունենաք 2 տարբերակ՝ կանխավճարային և հետվճարային փաթեթներ, որոնք սկսվում են 1,000 դրամից և կարող են տատանվել 1,500-9,500 ՀՀ դրամի սահմաններում՝ ելնելով Ձեր նախընտրած ծառայությունների ընդգրկումից:

Տնային ինտերնետը ապահովում են **UCom**, **Beeline**, **Rostelecom** և այլ ընկերություններ: Բոլորն առաջարկում են ինտերնետ/բջջային կապ/հեռուստատեսություն ծառայությունների համադրությամբ փաթեթներ, որոնք սովորաբար սկսվում են 6,000 դրամից: Եթե պատրաստվում եք վարձակալել անշարժ գույք, եղեք ուշադիր, և եթե տարածքում կան ինտերնետ և հեռուստակապ, Դուք պարտավորված կլինեք յուրաքանչյուր ամիս վճարել դրանց համար:

Ծառայությունները ձեռք բերելիս Ձեզ անհրաժեշտ կլինի անձնագիր (օտարերկրյա անձնագրերը նույնպես կիրառելի են) կամ նույնականացման քարտ: Դուք նաև պետք է նշեք Ձեր հասցեն: Եթե չունեք գրանցման հասցե, ապա ինտերնետ մոդեմ ձեռք բերելու համար պետք է թողնեք կանխավճար:

ՀԱՎԵԼՈՒՄ. Արցախ ճամփորդելիս չմոռանաք ակտիվացնել ռոումինգ ծառայությունը, որպեսզի հնարավոր լինի զանգեր և SMS-ներ կատարել Արցախից դուրս, ներառյալ Հայաստան:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Հասարակական տրանսպորտ
Հասարակական տրանսպորտի ծառայությունները ներառում են ավտոբուսներ, երթուղային տաքսիներ (մարշրուտկաներ), մետրո (միայն Երևանում), գնացքներ և տրոլեյբուսներ երկրի տարբեր մասերում:

Հանրային տրանսպորտի գները
- Մետրո (ժ.՝ 7:30 - 23:00). 100 ՀՀ դրամ
- Տրոլլեյբուս. 50 ՀՀ դրամ
- Քաղաքային ավտոբուսներ. 100 ՀՀ դրամ (70 ՀՀ դրամ Արցախում)
- Միջքաղաքային ավտոբուսներ. 1,000 - 6,500 ՀՀ դրամ՝ կախված երթուղու երկարությունից
- Գնացքի տոմսերի գները 1,000 - 2,500 ՀՀ դրամ՝ կախված երթուղու երկարությունից և գնացքի տեսակից

Երթևեկության համար բջջային հավելվածներ
- **A2B Transport**
- **Yerevan Metro**
- **Transit.am**
- **2Park**

Հեծանվային երթևեկությունը Հայաստանում
Հայաստանում հեծանվային երթևեկությունը դառնում է սովորական: Երևանի կենտրոնում ավելացվել են հեծանվային երթուղիներ, և նախատեսվում է ավելացնել դրանց քանակը:

Համօգտագործման հեծանվային ծառայությունները նույնպես հասանելի են: Առաջարկում ենք ներբեռնել **Yerevan Ride** և **MIMO Bike** հավելվածները համօգտագործման հեծանվային ծառայությունների համար:

Տաքսի ծառայություններ
Հայաստանում մինչև 4 կմ երթևեկելու համար տաքսի ծառայությունների գինը սկսվում է 500-600 դրամից: Դրանից հետո հիմնականում գանձվում է 100 դրամ 1 կմ-ի դիմաց: Կախված ծառայության մատակարարից՝ գները տատանվում են: **GG**, **UTaxi** և **Yandex** հավելվածներն օգտագործվում են ուղևորությունն առցանց պատվիրելու համար:

REPAT ARMENIA TIP. Փողոցում կայանած տաքսիները, մասնավորապես՝ Կասկադում, Օպերայում և Հանրապետության հրապարակում, կգանձեն ավելի բարձր վճար:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարորդական իրավունք
Եթե ցանկանում եք մեքենա վարել Հայաստանում և ունեք միջազգային լիցենզիա կամ ժամանել եք Վիեննայի կոնվենցիայի անդամ երկրից (ինչպիսիք են Ռուսաստանը, Վրաստանը և Միացյալ Թագավորությունը), ապա կարող եք նույն վկայականով վարել Հայաստանում: Եթե ոչ, ապա պետք է դիմեք տեղական վարորդական իրավունք ստանալու համար:

ՀԱՎԵԼՈՒՄ. Կանադան, ԱՄՆ-ն և Լիբանանը Վիեննայի կոնվենցիայի անդամ չեն: Վիեննայի կոնվենցիայի անդամ պետությունների ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **www.mfa.am**

Գրավոր և գործնական քննություններին գրանցվելն այժմ կատարվում է առցանց:

http:// **roadpolice.am/hy**

ՀՀ ոստիկանություն գրավոր քննություն հանձնելու նամակ ուղարկելու համար օգտագործեք այս հարթակը: Դուք կստանաք հաղորդագրություն կամ հեռախոսազանգ քննության տեղի և ժամի վերաբերյալ:

Գրավոր քննության գնահատականները Դուք կստանաք քննության ավարտի պահին, ինչից հետո կարող եք դիմել գործնական քննության համար:

Ձեզ անհրաժեշտ կլինեն անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որտեղ նշված կլինի բնակության վայրը:

Գրավոր քննություն. 3,000 ՀՀ դրամ
Գործնական քննություն. 3,000 ՀՀ դրամ
Վարորդական իրավունքի գինը. 12,000 ՀՀ դրամ

Վարորդական իրավունքի նվազագույն տարիքը 18 տարեկանն է:
Հայաստանում մեքենա վարելիս մեքենայի ապահովագրությունը պարտադիր է:

http:// Հայաստանում երթևեկության, թեստերի նմուշների, վիդեո դասընթացների և այլնի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք **www.varord.am** կայք:

ԿԵՑՈՒԹՅԱՆ

ԾԱԽՍԵՐ

Հայրենադարձների առաջին հարցերից մեկն այն է, թե Հայաստանում կեցության ծախսերը որքան են կազմում աշխատավարձի չափի համեմատ: Մենք կազմել ենք ամուսնական և ընտանեկան կարգավիճակների վրա հիմնված տարբեր բյուջեների ցուցակներ, որպեսզի օգնենք հայրենադարձներին պատկերացնել իրենց բյուջեն:

Յուրաքանչյուր անհատի և ընտանիքի կեցության ծախսը տարբերվում է՝ ելնելով նրանց անձնական կարիքներից և ծախսային սովորություններից: Այս գնահատականները հիմնված են հայրենադարձների ծախսային սովորությունների վրա:

ԱՄՍԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ԱՄՆ դոլար)	ՄԻԱՅՆԱԿ	ԶՈՒՅԳ	ԸՆՏԱՆԻՔ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ	$200-300	$250-450	$300-500
ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ (ՀՈՍԱՆՔ/ ԳԱԶ/ ԶՈՒՐ/ ՀԱՄԱՑԱՆՑ / ԲԶԶԱՅԻՆ ԿԱՊ)	$30-50	$50-100	$80-150
ՍՆՈՒՆԴ (ԽԱՆՈՒԹՆԵՐ, ՍՆՆԴԻ ԿԵՏԵՐ)	$100-250	$250-350	$300-400
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏՐՈ/ԱՎՏՈԲՈՒՍ/ՏԱՔՍԻ/ՄԵՔԵՆԱ)	$20-50	$50-100	$80-150
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (ԲԺԻՇԿԻ ԱՅՑԵԼՈՒԹԸՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1 ԱՆՁԻ ՀԱՄԱՐ)	$10-40	$10-40	$10-40
ԱՊՐԵԼԱԿԵՐՊ	$100-300	$200-500	$300-600

ՀԱՎԵԼՈՒՄ. Այստեղ հաշվարկված կեցության ծախսերը հիմնված են երևանյան գների վրա: Վարձակալությունն ու բնակարանների գները այլ քաղաքներում, օրինակ՝ Գյումրի, Վանաձոր և Կապան, ավելի մատչելի են:

Դուք կարող եք նախապես հաշվարկել Ձեր ծախսերը **numbeo.com** կայքի միջոցով:

ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

Ստորև կարող եք գտնել պետական հարկերի և ծախսերի բաշխումը, քանի որ դրանք վերաբերում են հայրենադարձության գործընթացին, որը մանրամասն նկարագրված էր այս ուղեցույցում:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՃԱՐՈՒՄՆԵՐ
Քաղաքացիություն ստանալու դիմում	1,000 ՀՀ դրամ
Սովորական անձնագիր	1,000 ՀՀ դրամ
Բիոմետրիկ անձնագիր	25,000 ՀՀ դրամ
Նույնականացման քարտ (ID քարտ)	3,000 ՀՀ դրամ
Հասցեի գրանցում	1,000 ՀՀ դրամ
Անձնագիր կամ ID քարտի արագ թողարկում	
Հաջորդ աշխատանքային օր	20,000 ՀՀ դրամ
3 աշխատանքային օրվա ընթացքում	10,000 ՀՀ դրամ
5 աշխատանքային օրվա ընթացքում	5,000 ՀՀ դրամ
Ժամանակավոր կացության կարգավիճակ, քարտ և գրանցում	105,000 ՀՀ դրամ
Մշտական կացության կարգավիճակ, քարտ և գրանցում	140,000 ՀՀ դրամ
Հատուկ կացության կարգավիճակ, հատուկ անձնագիր և գրանցում	150,000 ՀՀ դրամ
Ժամանակավոր կացության կարգավիճակի երկարացում	105,000 ՀՀ դրամ
Մշտական կացության քարտի փոփոխում	20,000 ՀՀ դրամ
Մշտական կամ ժամանակավոր կացության քարտի վերականգնում	12,000 ՀՀ դրամ
Նոր հատուկ անձնագրի թողարկում կորցնելու դեպքում	75,000 ՀՀ դրամ

http://

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք մեր կայքէջը՝ **diaspora.gov.am**

ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

Հրշեջ ծառայություն....101
Ոստիկանություն....102
Շտապ բուժօգնություն....103
Գազի վթարային ծառայություն....104
Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոն....911/101
Երևանի քաղաքապետարանի թեժ գիծ....105
Երևանի քաղաքի ճգնաժամային կառավարման կենտրոն....108
Ճշգրիտ ժամանակ....110
Սփյուռ տեղեկատվական համակարգ....113
Ճանապարհային ոստիկանություն....177
Երկաթուղի....184
Զվարթնոց օդանավակայանի տեղեկատու....187
Առողջապահության նախարարության թեժ գիծ....8003

diaspora.gov.am
@DiasporaGovAm